### ՄԻ ՎՀԱՏԻՐ.

*Տես՝ խաւարը թանձրանում է,*
*Վերջին շողն էլ կը հանգչի.*
*Սեւ, ցուրտ գիշեր մօտենում է—*
*Արեւը շուտ կը թաքչի....*

*Հզօր քունը հեռու քշիր—*
*Մեռելութիւն չը բերէ,*
*Յուսոյ ձայնը թող սիրալիր*
*Սրտիդ բոցը վառ պահէ:*

*Մի՛ վհատիր, եթէ աւեր*
*Եւ սուգն ընկաւ քեզ բաժին.*
*Թող տարկութեան մնայ գիշեր*
*Ա՛յն չը բերէ քո սրտին:*

*Թէ երգդ անուշ սուրբ բերկրութեան*
*Էլ տեղ չունի աշխարհում,*
*Թէ շղթայի հիմայ դաժան*
*Շաչիւնն է լոկ քեզ հասնում—*

*Մի՛ վհատիր, ե՛լ ասպարէզ,*
*Ա՛ռ եօթնաղի քո քնար*
*Եւ տանջանքի՛ օրհներգ տուր մեզ,*
*Ողբի աղբիւր մեզ համար:*

*Կամ՝ թող հնչեն հզօր լարեր*
*Որպէս փողը յաղթական,*
*Թնդան ուժգին թմբած սրտեր,*
*Փայլի սուրբ խաչ վկայութեան ...*

*Եւ քո ձայնը թող որոտայ*
*Ինչպէս ամպրոպ խաւարում—*
*Թուխպը ցրուի, փայլակ ցոլայ*
*Արեւով փրկուած աշխարհում:*

—

### Ս. ՊԷՏԻՕՖԻՑ.

*Ես դուրս եմ՝ գալիս դաշտը ամայի—*
*Չը կայ մի ծաղիկ, զարդարէ նորան.*
*Չը կայ եւ մի ոստ, որից սոխակի*
*Մեղեդին հնչէր քնքոյշ, քաղցրաձայն:*
*Խաւար է գիշեր, երկնակամարում*
*Չէ ցոլում՝ ոչ մի լուսավառ աստղիկ—*
*Այսպէս ժամանակ, ի՞նչպէս է լինում,*
*Որ միտս ես ընկնում, նազելի՛ աղջիկ:*

*Դու միտս ես ընկնում եւ ամենայն բան*
*փոխւում է այստեղ. պայծառ է գիշեր,*
*Եւ ճանապարհիս բացուած են վարդեր,*
*Երգում է այնտեղ սոխակն աննման.*
*Առաջիս դաշտն է լիքը ծաղիկներով.*
*Երկինքն էլ վառ է փայլուն աստղերով:*

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

---

## ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ.

*Առաքել Բաղիշեցի, Նաղաշ, Կարապետ Վարդապետ Բաղիշեցի, Գրիգոր Ծերենց:*

Միջնադարեան հայ բանաստեղծների երգերն հետզհետէ հրատարակել խոստանալով՝ այս նուագ կամենում ենք ճաշակ տալ չորս հին երգիչների քերթուածների մասին: Թէ ինչ աստիճանի սերտ է մեր հին և նոր ժողովրդական երգիչների մէջ եղած կապը, այդ կը տեսնէ իւրաքանչիւր մօտիկից դիտողը: Հայ ժողովրդական երգիչների դպրոցը շատ հին պէտք է լինի, թէպէտ և մեր գրաւոր գրականութեան պահած նշխարներից դատելով՝ այդ դպրոցի հետքերը կարող ենք դէպի վեր մինչև Ժ. դարը հասցնել: Այն զարմանալի նմանութիւնը, որ կայ մեր դարու և նախընթաց դարերի հայ երգիչների քերթութեան ձևերի և բովանդակութեան մէջ, գուշակել է տալիս, որ այդ նմանութեան հետքերը շատ հին պիտի լինին: Ու այժմ մեզ մատչելի նիւթերի մէջ կարող ենք հայ երգիչների մի որոշ դպրոցի արտադրութեան նշաններն արձանագրել: Այդ դպրոցը կարելի է ամենայն իրաւամբ Ներսէս Շնորհալու դպրոց կոչել, որովհետև նա է այն հնագոյն երգիչը, որի երկերի մէջ առաջին անգամ նկատում ենք այն բոլոր բանաստեղծական ձևերն ու տաղաչափական խաղերը, որ յետագայ երգիչների համար կանոնական նշանակութիւն են ստացել:

Այն չորս երգիչներն, որոնց երգերից ը

մի քանիսը պատահարար միացած են մի տաղարանի մէջ, միջին օղակն են կազմում հայ բանաստեղծների շղթայի սկսած ԺԲ. դարուց մինչև մեր օրերը։ Ինչպէս օրինակներից էլ պարզ կերևի, այդ երգիչները ծառայարար հետևել են Շնորհալի երգչին, բայց և զերծ չեն մնացել իրենց ժամանակի ազդեցութիւններից։ Ժամանակի ազդեցութեան առաջին նշանը է լեզուի ռամկօրէնին մերձենալն և բանաստեղծական մի քանի նոր ձևերի կիրառութիւնը, որ յատուկ են մեր ժամանակի աշուղ—երգիչներին։

«Հայերէն դպրութեան պատմութեան» հեղինակը իւր գրուածքի Բ. հատորում յիշատակում է մեր երգիչներից Գրիգոր Ծերենցին (Խլաթեցի) եր. 232, Առաքել Բաղիշեցուն և Նաղաշին (Մկրտիչ Ամդայ եպիսկոպոս) եր. 266. համարելով սրանց ԺԵ—ԺԶ. դարու երգիչներ, իսկ Կարապետ Բաղիշեցու մասին յիշատակութիւն չը կայ։

Մեր նախընտրած ուսումնասիրութեան եղանակին հետևելով՝ ծանօթանանք այն ձեռագիր տաղարանի հետ, ուր յիշեալ բանաստեղծների երկերից գտնում են։

## ՏԱՂԱՐԱՆ 3.

*ԹԵՐԹ 156, 12-՞ ՄԵԾՈՒԹԻՒՆ. 15,×10, 3. հմ. — ԳՐՈՒԹԻՒՆ. միջնեան, 10×7. հմ. ԳԻՐ.—նօտր, բոլորգիր եւ շեղագիր խառն։ Երգերը ծանանիշներով։ ՏՈՂՔ.—17 -19 ՆԻՒԹ.—բամբակեայ հաստ եւ դեղին թուղթ։ ԹԱՆԱՔ. սեւ եւ կարմիր։ ԿԱՖՄ.—տախտակից, երեսի կողմը կաշով, իսկ ներսի կողմը կարմիր կերպասով պատած, բերանակալ կաշու կէսն է մնացել, կազմի վրայի մեխի տեղերը դատարկ են։ Կաշու վրայ զարդագծեր կան, ՀԱՆԴԱՄԱՆՔ.—վատ, խոնաւութիւն առած է եւ քեցակեր է, սկզբի եւ վերջի թերթերի, նոյնպէս եւ լուսանցքներում զրչափորձութեան հետքեր կան մի քանի տեղ վրացերէն գրով։ ԹԵՐԹՔ.—բ. ծալն ամբողջովին չը կայ. դ. ծալից պակաս է 2 թերթ. ե. ծալից 1, զ. ծալից 3, իսկ վերջին ժե. ծալից միայն 4 թերթ կայ։ Պատռած եւ հանած են մի քանի թերթեր, թերթ 88 եւ 96, միայն վերեւի փոքրիկ մասերն են մնացել։ ԺԱՄԱՆԱԿ.—ռնգ.=1627. ՏԵՂԻ.—ի վանսն Նորոդուդ ի դուռն սբ. Յովհաննու Մկրտչին։ ԳՐԻՉ.—Ղուկաս արեղայ։ ՎԵՐՆԱԳԻՐ.—չունի։ ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.—թ. 143 ա. (գրչի) եւ թ. 154 բ. (ստացողի), թերի։ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ.—կազմի յետեւի կողմում մէջ տեղը 9×5 հմ. մեծութեամբ մի թուղթ է կպցրած, որի վրայ նոր շեղագրով գրուած է. «№ 84. Տաղարան հին, մասնաւոր ծիւղագրութիւն, խորհրդատետր, բացատրութիւն խորհրդոց, գրեալ ի թուին եւ հ. . . . Ղուկաս արեղայի ի վանս յոհաննու որ յԵղվարդ։ ԵՐԵՍԱՓԱԿԱՆ.—չունի։ ՏԷՐ.—Պապէ, որդի Փիրդուլու եւ Վարդխաթունի։*

ԹՈՒՂԹ 1 ա. (Նօտր գրով յետոյ գրուած) Հրէայք յակոբին. լատինք՝՝. . . քրիստոնեայ եկեղեցիների հիմնադիր առաքեալների անունները մինչև երեսի կէսն, ապա գրչափորձ։

1 բ. Ձայնանիշներով չորս տող. «ամն թագաւորին, այն նորածին Փրկչին. զքեզ պսակողին փառք յաւիտեանս ամէն. Եւ զգծողս յիշեա՝՝
Երեսի մէջ տեղը դատարկ, իսկ վերջը երկու տողում.՝՝ Աւգնեա՝ հոգիդ սրբած. ճշմարիտ ամէն»։

ԹՈՒՂԹ 2 ա. (Կարմիր թանաքով է գրուած վերնագիրն ու սկզբի տողերը).
Դ-ն՝ ։-----ն+ որ էրէ+ վ-ն՝ ։-ը՝ ---՝ ը-ա գ-ա-ը-ն՝ Դ-է-ը-ն.՝՝ Եւ ապա երգեասա՝՝ (՞)։ ՍԿԻԶԲՆ.
«Երգս . . . . . երգեմք բանական, երկնագ միասնական։ Ի նմանս աննման. ձեւս անձեւական և անկերպարան։ Զի...

Թ. 2ա—3բ. Նոյն գտնէք ԺԵ. անից բաղկացած։

Թ. 3բ—5ա. «Ե-ա-վ-ն-ի՛. Ա-ե-ի՛. Զ-ն-դ-ա-ս է»։ «Ա-ւ-է-ա իսկապէս . . . . Թ. տուն։

Թ. 5—6ա. «Դ-ն՝ Ե-ր-ի-վ-ն-ի՛». ԺԱ. տուն։ Սկզբնագրերը կազմում են «Խաչատուր Կչր. (—Կեչարացի՞)։

Թ. 6ա—8ա. «Երկու վանկի աւելի ձայք (ձա՞յնք) այս է»։ ԺԳ. տուն. որոց սկզբնագրերը կազմում են. «Հոգոյն սրբոյ Ի. 6. 2.»։

Թ. 8ա—12բ. «Տաղ երկնային զաւրացն»։ ԼԴ. տուն։ որից միայն սկզբի երկու տողը կայ։ Մնացածն ընկել է։ որովհետև Բ. ծալն ամբողջովին հանուած է։

( Շարունակելի )

Ն. Քարամեանց.